Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ.- «ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՅՍՏԱԿ Է, ԱՅՍՏԵՂ ՈՐԵՒԷ ՉԻՋՈՒՄ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ»

Ա.Պ.Հ. ղեկավարների հանդիպման շրջանակներում, Ապրիլի 1ին, Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործոց նախարարութեան ընդունելութիւնների տանը տեղի ունեցաւ Հ.Հ. նախագահ Ռ. Քոչարեանի եւ Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի առանձնազրոյցը, որին աւելի ուշ միացաւ նաեւ Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործոց նախարար Ի. Իվանովը:

Հայ լրագրողների հետ ունեցած ճեպազրոյցում Հ.Հ. նախագահ Ռ. Քոչարեանը, անդրադառնալով Հ. Ալիեւի հետ իր հանդիպման, յայտնեց, թէ քննարկուել են Ղարաբաղեան հակամարտութեան առկայ իրավիճակը եւ փակուղուց դուրս գալու հնարաւոր ուղիները:

Ըստ Ռ. Քոչարեանի, թեեւ յստակ պայմանաւորուածութիւն ձեռք չի բերուել, այնուամենայնիւ, հանդիպումը օգտակար է եղել, նկատի ունենալով, որ քննարկուել են փոխադարձ վստահութեան մթնոլորտ ստեղծելու հնարաւոր քայլերը: «Խօսքը տնտեսական ոլորտում ինչ-որ տեղ հնարաւոր քայլերի մասին է»,- յայտնեց Հ.Հ. նախագահը:

Խօսելով Ղարաբաղեան խնդրի վերաբերեալ կողմերի դիրքորոշումների մասին, Ռ. Քոչարեանը նշեց, որ դրանք էապէս տարբերւում են: Ալիեւը դարձեալ անընդունելի է համարել Մինսկի Խմբի համանախագահների առաջարկութիւնները՝ պատճառաբանելով, որ դրանք դէ-ֆակտօ Ղարաբաղի անկախութիւնն են նշանակում:

Ըստ Ռ. Քոչարեանի, Ղարաբաղն այսօրուայ դրութեամբ զիջումներ կատարել է. նախ՝ Լ.Ղ.Հ. անկախութեան հռչակումն արդէն Հայաստանի հետ վերամիաւորման գաղափարից շեղում էր, «ընդհանուր պետութեան» սկզբունքն էլ եւս մէկ զիջում է: Մինչդեռ Ադրբեջանը, ինչպէս 88ին, այսօր էլ մնում է նոյն՝ ինքնավարութեան գաղափարի վրայ: «Ես մեր դիրքորոշումը բաւական յստակ արտայայտել եմ եւ կարծում եմ, որ այստեղ որեւէ զիջում չի կարող լինել», - ասաց Հ.Հ. նախագահը:

«Արմենպրէս»